§ 59. Տոհմային անասունների, ինչպես և Փերմաներում գտնվող անասունների ապահովագրական արտոնությունները տրվում են ապահովագրական տնօտչների կողմից, կոլխոզի ապահովագրական քարտի 2-րդ հատվածի ավագաների հիման վրա, ապահովագրական վճարները հաշվարկելու հետ միաժամանակ։

§ 60. Անասնաբուծության գարգացման պետական պլանը գերակատարող և անասունների պահպանման լավագույն ցուցանիններ ունեցող կոլխոզների նկատմամբ արտոնությունների գումարը, ապահովագրական տեսուչը հաշվարկում է աշխատավորների դեպուտատների շրջանային խորհրդների գործադիր կոմիտեների վորոշման հիմա վրա և այդ վորոշումներով սահմանված չափերով։

Յեթե գործադիր կոմիտեյի վորոշմամբ այդ տոնությունը հատկացվում է ավյալ կոլխոզի բոլոր անասունների նկատմամբ, այս դեպքում արտոնության գումարը պետք է հաշվել անասունների ապահովագրության վճարների հաշվարկված ընդհանուր գումարից («Լ» սյունյակի գումարների ընդհանուր գումարից) և ցույց է տրվում քարտի 45 տողում։

Իսկ յեթե արտոնությունը տրվում է անասունների միայն առանձին տեսակների նկատմամբ (որինակ

միայն խոչոր յեղջյուրավոր անասունների կամ միայն վոչխարների) այս դեպքում սահմանված չափով (տոկոսով) արտոնության գումարը պետք է հաշվարկել անասունների համապատասխան տեսակների ապահովագրությամբ հաշվարկված վճարների գումարներից, վորոնք ցույց են տրված քարտի Յ-րդ հատվածում:

Այսպիսի դեպքերում 45-47 տողերում ցույց ե տրվում անասունների տեսակը, արտոնության չափը տոկոսներով և արտոնության գումարը (որինակ՝ խոչոր յեղջյուրավոր անասուններ— 20%):

§ 61. Անասնաբուծության զարգացման պետական պլանը գերակատարող և անասունների պահպանման լավագույն ցուցանիշներ ունեցող կոլխոզներին արտոնություն են տրվում անկախ այն արտոնություններից, վորոնք սահմանված են տոհմային անասունների, ինչպես նաև ֆերմաններում գտնվող անասունների ապահովագրությամբ:

Բոլոր տեսակի արտոնությունները պետք է հաշվարկել անասունների ապահովագրության վճարների սկզբնական հաշվարկված գումարներից:

Որինակ՝ Տոհմային խոչոր յեղջյուրավոր անասունների ապահովագրությամբ, վորոնք գտնվում են ապրանքային ֆերմաններում, տարիֆային դրույքներով հաշվարկված՝ ապվճար 800 ռուբ. շրջանային խորհրդի գործադրի կոմիտեյի վորոշմամբ, այդ անասունների ապահովագրության նկատմամբ հատկացված արտոնություն 20%-ի չափով (անասնաբուծության բարձր ցուցանիշների համար):

Այս յերեք արտոնություններն ել (յուրաքանչյուր 20%-ով) յերեք դեպքումն ել հաշվարկվում են 800 ռուբլի գումարից, այսինքն յուրաքանչյուր արտոնության գումարը կազմի 160 ռուբ., ընդամենը 480 ռուբլի:

§ 62. Հականընդհային պաշտպանության լավագույն ցուցանիշներ ունեցող, ինչպես և հարակիմացկուն տանիքով շենքեր կառուցող (կղմինդրից, թիթեղից, չիֆերից և այլն) կոլխոզներին տրվող արտոնություն-

ները հաշվարկվում են ապահովագրական տեսուչների կողմից, շրջանային խորհուրդների գործադրից կոմիտեների վորոշումներով նախատեսնված չափով կրակից և այլ տարերային աղետներից գույքի ապահովագրությամբ հաշվարկված վճարների գումարներից, այսինքն քարտի 4-րդ տողում ցույց տրված գումարներից:

§ 63. Վերաբնակիչներից կազմակերպված նոր կոլխոզները, ինչպես և այն կոլխոզները, վորոնք իրենց կազմի մեջ ընդունել են վերաբնակիչներ (ըստ վերաբնակեցված տնտեսությունների քանակի) այդ նոր բնակավայրերում ազատվում են ապահովագրական վճարումներից:

ա) Խաբարովսկի և Պրիմորյայի յերկրամասերում և ծայրագույն Հյուսիսի շրջաններում վերաբնակեցումից սկսած՝ 10 տարի ժամկետով:

բ) Զիտայի մարզում և Բուրյատ-Մոնղոլիայի ԱԷ ՍՀ 6 տարի ժամկետով:

գ) Իրկուտսկի մարզում 3 տարի ժամկետով:

դ) ԽՍՀՄ մնացած շրջաններում 2 տարի ժամկետով:

Ապահովագրական վճարումներից ազատումը կատարվում է ԿԳԿ և ԺԿԽ-ի 1937 թ. 17/11— №115/2043 վորոշման հիման վրա.— «Գյուղատնտեսական վերաբնակեցման արտոնությունների մասին»: Վերաբնակեցված տնտեսությունների քանակը սահմանվում է առապահովագրական քարտի կազմման որվա տվյալներով:

§ 64. Իրենց կազմի մեջ վերաբնակեցվողներ ընդունող կոլխոզների գույքի ապահովագրությամբ արտոնությունների գումարը հաշվարկվում է հետեւյալ կերպ:

Կոլխոզի ապահովագրական վճարների ընհանուր գումարը (առանց արտոնությունները հանելու— տող 42) բաժանվում է կոլխոզի տնտեսությունների ընդհանուր թվի վրա (վերաբնակվողների հետ միասին) և ստացած արտադրյալը բազմապատկվում է վերաբնակվողների տնտեսությունների քանակի վրա: Այդ ստացած գումարը կազմի արտոնությունը և վորոնքին մասնակի մասնելու կոլխոզի քարտի 49 տողում: Որինակ՝ կոլխոզի գույքի ապահովագրությամբ հաշ-

Վարկված վճարների գումարն է 1800 ռուբլի, կու^լ
խողի կազմի մեջ մտնում են 120 տնտեսություն,
նույն թվում 14 վերաբերակված:

Արտոնության գումարը կերպի:

$$\frac{1800 \times 14}{120} = 210 \text{ ռուբ.}$$

§ 65. (Հայկական ԽՍՀ-ին չի վերաբերվում):

§ 66. Բոլոր արտոնությունները հաշվարկվում են
ապահովագրական վճարների նոր հաշվարկված գու-
մարներից. ապառքը և տույժը հաշվի չեն առնվում:

Կոլխոզին հատկացված արտոնությունների ընդ-
հանուր գումարը հաշվվում է և գրանցվում 50-րդ
տողում:

§ 67. Վճարման յենթակա ապահովագրական վր-
ձարները հաշվարկելու համար պետք է ապահովագրա-
կան վճարների հաշվարկված ընհանուր գումարից հա-
նել արտոնությունների ընդհանուր գումարը և գրան-
ցել կոլխոզի քարտի 6-րդ հատվածի («յենթական յե-
կամաման») «ընդամենը» սյունյակում:

Այդ գումարը բաշխվում է ըստ սահմանված վր-
ձարման ժամկետների:

Ապահովագրական տեսչության հաշվապահը կոլ-
խողի նախորդ տարվա անձնական հաշիվների ստուգ-
ված տվյալներով հաշվարկում են նախորդ տարիներից
մնացած ապառքների գումարը:

Ապառքի վրա հաշվարկված տույժը չի մտցվում
ապառքի մեջ և ցույց է տրվում առանձին:

Ապահովագրական վճարումները հաշվարկելիս,
անցած տարիների ապառքի վրա տույժը, ապահովա-
գրական տեսչության հաշվապահի կողմից հաշվարկ-
վում է, մուծման համար սահմանված ժամկետից առ
վճարման նոր վկայագրի (ծանուցագրի) դուրս գրման
որն անցած ժամանակաշրջանի համար:

§ 68. Ապահովագրական վճարների հաշվարկու-
մից հետո կոլխոզի ապահովագրական քարտը ստորա-
գրվում է ապահովագրական տեսչի կողմից, իսկ
ստուգով կատարվում է ապահովագրական ավագ տե-
սչը:

Ապահովագրական վկայագրի (ծանուցագրի)
դուրս գրումը կատարվում է ապահովագրական ավագ
տեսչի կողմից կոլխոզի քարտի ստորգրած տվյալների
հիման վրա:

§ 69. Ապահովագրական վկայագրի (ծանուցա-
գրի) կոլխոզին ուղարկվում է փոստով, կամ հանձ-
նվում է անձամբ ապահովագրական տեսչի կամ հար-
կային գործակալի միջոցով:

Ապահովագրական վկայագրի (ծանուցագրի)
հանձնելիս, կոլխոզի ապահովագրական քարտի վրա
տուրագրում է ծանուցագրին ստցողը (կոլխոզի վար-
չության նախագահը, անդամը, կամ հաշվետարը):
Դրա հետ միաժամանակ ապահովագրական տեսուչը
կամ հարկային գործակալը, իրենց ստորագրությամբ,
ապահովագրական վկայագրի (ծանուցագրի) վրա նը-
շում են նրա հանձնման թվաքրությունը (ամիս, ամ-
սաթիվ և տարեթիվ):

§ 70. Ապահովագրական վկայագրի (ծանուցագրի)
հանձնելուց հետո որյեկտների հաշվառման, ապ-
ահարման հաշվարկման գործում սխալներ հայտնա-
բերելու դեպքում կամ ապահովագրական վճարումնե-
րի գումարը փոխվելու հետ կապված ուրիշ ուղղում-
ներ մտցնելու անհրաժեշտության դեպքում, նախորդ
ապահովագրական վկայագրի (ծանուցագրի) փոխա-
րեն դուրս է գրվում նորը և հանձնվում կոլխոզին:

§ 71. Հաշվառումից (կոլխոզ քարտի կազմելուց)
հետո կոլխոզում մուտք յեղած գույքի, այդ թվում
նաև նոր մտած կոլխոզականների հանրայնացրած
գույքի համար, լրացուցիչ ապահովագրական վճար-
ներ չեն հաշվարկվում:

IV ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԳՈՒՅՑՓԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՊԱՐԱ-
ՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒ-
ՄԸ ՅԵՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՏԿԱՑՈՒՄԸ

§ 72. Կոլխոզների, բանվորների, ծառայողնե-
րի, մենատնտես գյուղացիների և այլ քաղաքացիների
տնտեսությունների ապահովագրական վճարները հաշ-

Վարկում ե ապահովագրական տեսուչը, ըստ ապահովագրվողների ցուցակով հաշվառված գույքի:

Ցուցակները կազմելուց հետո տնտեսություն մուտք յեղած գույքի համար լրացուցիչ ապահովագրական վճարներ չեն հաշվարկվում:

§ 73. Եենքերի ապահովագրության վճարները հաշվարկվում են հետևյալ կերպ՝ նրանց գնահատությունը (ապահովագրական պատասխանառվության գումարը) պետք ե բազմապատկել տվյալ վայրի համար սահմանված ապահովագրական գումարի 100 ռ. տարիֆային դրույքով և արտադրյալը բաժանել 100-ի: Որինակ՝ կոլխոզների տնտեսության շենքերի գնահատությունն ե 1300 ռուբի: Ապահովագրական պատասխանառվության 100 ռ. որինակ, 90 կոպեկ տարիֆային դրույքի գեպքում ապվճարը կկազմի՝

$$\frac{1300 \times 90}{100} = 11 \text{ ռ. } 70 \text{ կոպեկ}$$

§ 74. Անասունների ապահովագրական վճարումները հաշվարկվում ե հաշվառման յենթարկված անասունների յուրաքանչյուր տեսակի քանակը, նույն տեսակի մեկ գլուխ անասունի ապահովագրական վճարի վրա բազմապատկելու միջոցով:

Անասունների տվյալ տեսակի մեկ գլխի ապահովագրական վճարումը հաշվարկվում ե ապահովագրական կայուն նորման, ապահովագրական գումարի 100 ռ. ապվճարի տարիֆային դրույքով բազմապատկելու և արտադրյալը բաժանելու միջոցով:

Որինակ՝ 1. Կոլխոզների տնտեսությունների 1 տարեկանից բարձր խոշոր յեղջուրավոր անասունի ապահովագրական նորման սահմանված ե 250 ռ., իսկ ապահովագրական գումարի 100 ռուբլու տարիֆային դրույքն ե, որինակ՝ 3 ռ. 00 կոպեկ, տվյալ անասունի ապահովագրական վճարը կկազմի՝

$$\frac{250 \times 3,00}{100} = 7 \text{ ռուբ. } 50 \text{ կոպեկ}$$

Որինակ 2. Մենատնտեսների տնտեսություններում 18 տարեկանից բարձր ձիերի համար ապահովագրական ապահովման նորման մեկ անասունի համար սահմանված ե 125 ռ. (2-ից մինչև 18 տարեկան ձիու նորմայի 50%), տարիփային դրույքն ե ապահովագրական գումարի 100 ռուբլուց 14 ռ. 50 կոպ. մեկ գլխի ապվճարը կկազմի՝

$$\frac{125 \times 14,50}{100} = 18 \text{ ռուբ. } 13 \text{ կոպեկ}$$

§ 75. Մենատնտես տնտեսությունների գյուղատնտեսական կուլտուրաների դաշտային ցանքսերի ապահովագրական վճարները հաշվարկվում ե յուրաքանչյուր տեսակ կուլտուրայի (կամ մի խումբ կուլտուրաների, վորոնց համար սահմանված ե միատեսակ ապահովագրական ապահովման նորմաներ և ապահովագրական վճարների տարիֆային դրույքները) հեկտարների քանակը մեկ հեկտարի ապվճարով բազմապատկելու միջոցով:

Գյուղատնտեսական կուլտուրաների մեկ հեկտարի ապվճարը հաշվարկվում ե տվյալ տեսակի կուլտուրայի համար սահմանված ապահովագրական ապահովման նորման տարիփային դրույքով բազմապատկելու և ստացած արտադրյալը 100-ով բաժանելու միջոցով:

§ 76. Հաշվարկված ե ապահովագրվողների ցուցակի համապատասխան սյունյակներում գրանցված վըճարները գումարի վեցական ապահովագրության բոլոր որիեկտների նկատմամբ) և նրանց ընդհանուր գումարը դրանցվում ե «ընդամենը հաշվարկված են ապահովագրական վճարներ» սյունյակում:

§ 77. Զե № 102 ցուցակներում գրանցված ե հաշվի առնված գույքի ապահովագրությամբ կիրառվում են կոլխոզների տնտեսությունների համար սահմանված տարիփային դրույքները, իսկ ձե № 103 ցուցակում գրանցվածների նկատմամբ մենատնտեսների համար սահմանված տարիփային գույքները:

§ 78. Պարտագիր կոպարային ապահովագրության որենքի 33-րդ (ԽՍՀՄ ԺԿԽ-ի հրապարակած որենքի 29-րդ հոդ.) հոդվածի համապատասխան, առանձին

քաղաքացիների տնտեսություններին պարտադիր կոպարային ապահովագրության վճարումներից մասնակի կամ լրիվ կերպով ազատելը կատարվում է աշխատավորների դեպուտատների շրջանային կամ քաղաքային խորհուրդների գործադիր կոմիտեների վորոշամբ:

Նշված արտոնությունները պետք են հատկացնել մինչ ապահովագրական վկայագրերի (ծանուցագրերի) հանձնումը: Առանձին դեպքերում միայն կարող են այդ արտոնությունները հատկացվել ապահովագրական վկայագրերի (ծանուցագրերի) հանձնումից հետո:

Հատկացրած արտոնությունների գումարները գըրանցվում են ձև № 102 ցուցակների 17-րդ սյունյակում և ձև № 103 ցուցակների 27-րդ սյունյակում:

§ 79. Ապահովագրվողների՝ ձև № 102 ցուցակների 18-րդ սյունյակում և ձև № 103 ցուցակների 28-րդ սյունյակում, գրանցվում են ԽՍՀՄ կԳԿ և ԺԿԽ-ի 1937 թ. 17/11 վորոշմամբ սահմանված ԽՍՀՄ ժողկոմիուրածի կողմից հաստատված պլանով մեկ հանրապետության, յերկրամասի և մարզերի կոլխոզից վերաբնակեցման կարգով մյուսը փոխադրվող կոլխոզների, մենատնտեսների և այլ աշխատավորների արտոնությունները:

Վերաբնակեցվողների վերաբնակեցման վայրերում պարտադիր կոպարային (ապահովագրության) ապահովաների մուծումից ազատումը կատարվում է սույն հրահանգի 63 §-ով նշված ժամկետների ընթացքում:

Վերաբնակեցված տնտեսությունների ապահովաների ապառքները նախկին բնակավայրերում զիջվում են: Զիջման և ապահովաների ապառքների դուրս դրման համար հիմք են ծառայում վերաբնակեցման տոմսերը:

Ծայրագույն չյուսիսի վայրերում բնակվող քաղաքացիների համար սահմանված արտոնությունները նույնականացվում են վերելում նշված սյունյակերում:

§ 80. Գյուղական վայրերի ապահովագրվողների ցուցակների «Նախորդ տարիների ապառքներ» սյունյակում, գրանցվում են տնտեսության վրա հաշվող

նախորդ տարիների ապահովն առանց տույժի, վորապեսին գրանցվում է հատուկ ցուցակների հիման վրա, կազմված հարկային գործակալների կողմից և ստուգված վճարողների անձնական հաշվների տվյալների հետ:

Քաղաքային վայրերում ապահովատերերի ցուցակը կազմում է ապահովագրական տեսչության հաշվապահը:

Նախորդ տարիների ապահովի տույժը ցույց ետքը վում առանձին սյունյակով:

Մահմանված չափերով տույժերի գումարներն ապահովագրվողների ցուցակներում և ապահովագրական վկայագրերում (ծանուցագրերում) գրանցելիս, հաշվարկվում է առ ծանուցագրերը գրելու որը վճարման ժամկետը խախտելու ամբողջ ժամանակի համար:

§ 81. Մուծումների ժամկետները սահմանվում են միայն հաշվարկված ապահովագրական վճարների նըկատմամբ (ընթացիկ տարվա կոպար): Ապառքների և տույժերի գումարները մուծման ժամկետների չեն բաժանվում:

§ 82. Ապահովագրվողների ցուցակները, ապահովագրական ավագ տեսչի կողմից ստուգվելուց հետո, յուրաքանչյուր ապահովագրվողին դուրս են գրվում ապահովագրական վկայագիր (ծանուցագիր): Վկայագիրը ստորագրվում է ապահովագրական տեսչի կողմից:

§ 83. Գյուղական վայրերում ապահովագրական վկայագրերը (ծանուցագրերը) հանձնվում են ապահովագրվողներին Փինբաժնի հարկային գործակալների միջոցով:

Ապահովագրվողները ստացման համար ստորագրում են՝ «գյուղհարկի», կուլտուրքի և պարտադիր կոպարային ապահովագրության վճարման ծանուցագրերի հանձնման տեղեկագրում»:

Անբնակ չենքերի, ապահովագրական վկայագրերը դուրս են գրվում տիրոջ անունով և հանձնվում չենքերի հսկողությունն իրենց վրա վերցնողներին, կամ պատվիրված նամակով ուղարկվում են ապահովագրվողներին:

Քաղաքային վայրերում, ապահովագրական վկա-
յագրերն ապահովագրվողներին ե ուղարկվում պատվիր
ված, նամակով, կամ հանձնվում ե անձամբ ապահովա-
գրական տեսչի կամ թե հրավիրված անձնավորություն-
ների միջոցով, վերցնելով ստորագրություն:

§ 84. Բոլոր դեպքերում, յերբ կհայտնաբերվեն
հաշվառումից բաց թողած կամ թաղցրած ապահովա-
գրական որյեկտներ կամ ապահովագրական վկայագը-
րերը հանձնելուց հետո արտոնությունների հատկա-
ցում—տնտեսությանը դուրս ե գրփում նոր ապահովա-
գրական վկայագիր: Յեթե հիմնական վճարումների
մուծման սահմանված ժամկետներն անցել ե, լրացու-
ցիչ ապահովագրական վճարումների հասանելիք գու-
մարը պետք է մուծվի 15 որվա ժամկետում:

§ 85. Ապահովագրվողների ցուցակները կազմելու
և տվյալ տարվա սեպտեմբերի 15-ի միջև ընկած ժա-
մանակաշրջանում կոլխոզ մտած տնտեսությունների
չհանրայնացված գույքի ապահովագրությամբ, կա-
տարիլում ե հաջորդ տարվա համար հաշվարկված ա-
պահովագրական վճարումների վերահաշվարկ: Ապվե-
ճարների վերահաշվարկը կատարվում ե միայն այն
գույքի ապահովագրության նկատմամբ, վորպիսին
մնում ե տնտեսության անձնական ողտագործման հա-
մար: Այդ դեպքում կիրառվում ե կոլխոզնիկների տրն-
տեսությունների համար սահմանված ապահովագրա-
կան վճարումների դրույքները: Այդպիսի տնտեսու-
թյունների գույքի ապահովագրությամբ ապահովա-
գրվողների համար, նախկինների փոխարեն դուրս ե
գրփում նոր ապահովագրական վկայագեր (ժանու-
ցագրեր): Վճարումների վերահաշվարկման մասին,
ապահովագրվողների ցուցակներում (ձև № 103) և
վճարողի անձնական հաշվում կատարվում ե նշում:

§ 86. Կոլխոզներից դուրս յեկած և մենատրն-
տես տնտեսություն դառած տնտեսությունների գույ-
քի ապահովագրմամբ կատարվում ե ապվճարների վե-
րահաշվարկ:

1941 թ. պարտադիր կոպարային ապահովագրու-
թյամբ գույքի ապահովագրական վճարումների վերա-
հաշվարկ ե կատարվում ե այն դեպքում, յեթե տնտե-

սությունը կոլխոզից դուրս ե գալիս ապահովագրվող-
ների 1940 թ. ցուցակները կազմելու որվա (1941 թ.
ապահովագրության համար) և 1940 թ. նոյեմբերի
1-ի ժամանակաշրջանում: Այդպիսի տնտեսություննե-
րի գույքը 1941 թ. համար ապահովագրվում ե մենա-
տնտես տնտեսությունների համար սահմանված դը-
րույցներով:

Այդպիսի տնտեսությունների գույքի ապահովա-
գրության դեպքում, նախկին ապահովագրական վը-
կայագրի (ժանուցագրի) փոխարեն, դուրս ե գրմում
և հանձնվում ե նորը:

Լրացուցիչ ապվճարների գումարը, ապահովագրը
վողների կողմից պետք ե մուծվեն սահմանված ժամ-
կետներին, իսկ յեթե նոր ապահովագրական վկայա-
գրի (ժանուցագրի) հանձնման պահին ժամկետներն
արդեն անցել ե—15 որվա ընթացքում: Վճարումների
վերահաշվարկման մասին ապահովագրվողների ցու-
ցակներում (ձև № 102); նույնպես և վճարողի անձ-
նական հաշվում կատարվում ե նշում:

Վ ԱՊՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ՀԱՆՉԱՄԱՆ ՑԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

§ 87. Ապահովագրական վճարումները կոլխոզները
մուծում են պետքանիշի բաժանմունքը անդրամարկղա-
յին հաշվարկի կարգով:

Առանձին դեպքերում կոլխոզները վճարումները
կարող են մուծել կանխիկ դրամով:

§ 88. Գյուղական վայրերում կոլխոզնիկները, մե-
նատնետեսները և այլ ապահովագրվողները (բացի կոլ-
խոզներից) ապվճարները վճարում են Փինբաժինների
հարկային գործակալներին:

Շրջանի սահմաններից դուրս ընակվող ապահովա-
գրվողները, ապահովագրական վճարումները կարող
են փոխագրել փոստով Պետքանիշի բաժանմունքը,
գույքի գտնվող վայրի տեսչության անունով:

Այն շրջաններում, վորտեղ կան շրջանբաժինների
դրամարկղներ, ապահովագրական վճարումները կա-
րով են մուծվել այդ դրամարկղները:

Գյուղական բնակչությունից՝ փոստով կամ շըրջ-
ֆինքածինների դրամարկղների միջոցով մուտք յեղած
ապվճարների մասին ապահովագրական տեսչությունը
հաղորդում է հարկային գործակալներին, վճարումնե-
րը մուտք լինելուց վոչ ուշ, քան հետեւյալ որը:

§ 89. Քաղաքային վայրերի, բանվորական և ամառա-
նոցային ավանների ապահովագրվողները, ապվճարնե-
րը մուծում են կանխիկ դրամով, ներկայացնելով ձե-
կ 136 ապահովագրական վկայագրերը՝

ա) Պետքանկի բաժանմունքները:

բ) Այն շրջաններում, վորտեղ կան շրջֆինմաժին-
ների դրամարկղներ— այդ դրամարկղները:

գ) Ապահովագրական տեսուչներին:

§ 90. Սահմանված ժամկետներին ապվճարները
չմուծելիս յուրաքանչյուր ժամկետանց որվա համար
բարդվում ե տույժ, սկսած վճարման ժամկետը լրանա-
լուց հետո հետեւյալ որվանից և մինչև ժամկետանց
գումարի մուծման որը ներառյալ:

Տույժի բարդումը կատարվում է ապառքի լրիվ
ոռութիների վրա: Ընդվորում ժամկետանց 50 և ավելի,
կոպեկները համարվում են վորպես լրիվ ոռութի, իսկ
50 կոպեկից պակասը չի հաշվվում (դեռ ե ձգվում):

Տույժի վրա տույժ չի բարդվում:

Ապառքը դատական կարգով գանձելիս տույժի բար
գումար դադարեցվում է դատուրանի վորոշման որվա-
նից:

§ 91. Մուծվող գումարներից հաջորդականորեն
մարվում են՝

ա) Նախորդ տարիների ապառքը,

բ) Այդ ապառքի տույժը,

գ) Ընթացիկ տարվա ժամկետանց վճարումները,

դ) Այդ վճարումների տույժը,

յե) Ընթացիկ տարվա հերթական վճարումը:

§ 92. Ապահովագրական վճարումները հարկային
գործակալներն ընդունում են ԽՍՀՄ ֆինժողկոմատի
կողմից սահմանված անդորրագրերով:

Այդ անդորրագրերը տրվում ե հատուկ անդորրա-
գրքույկներից, վորպիսիք առանձնացված են պարտադիր

կոպարային ապահովագրության ապվճարների ըն-
դունման համար:

Ապահովագրական վճարումների հանձնումը կամ
փոխադրումը Պետքանկի շրջանային բաժանմունքի
Պետապի հաշվին, հարկային գործակալների կողմից,
կատարվում է ԽՍՀՄ Ֆինանսների կողմից սահմանված
ժամկետներին, բայց վոչ պակաս քան շաբաթը յեր-
կու անգամ:

Ապահովագրվողների անձնական հաշվները ձեւ
№ 1 գրքում բացվում են հարկային գործակալների
կողմից, ապահովագրվողների ցուցակների կամ ապա-
հովագրական ձեւ № 136 վկայագրերի հիման վրա և
յուրաքանչյուր գյուղխորհրդի համար տարվում է ա-
ռանձին:

Հարկային գործակալների մատակարարումը անձ
նական հաշվների գրքերով, ուղեկցող տեղեկագրերի
բլանկներով, մուտքի որագրերով ու անդորրագրե-
քույկներով կատարվում է շրջֆինբաժնի կողմից:

§ 93. Շրջֆինբաժնների դրամարկղները ապա-
հովագրվողներից (բացի կոլխոզներից) վճարումներն
ընդունում են հարկային գործակալների համար սահ-
մանված կարգով:

Շրջֆինբաժնի դրամարկղները, ապահովագրական
տեսչությանը հաշվետու յել լինում ամեն որ, հանձնե-
լով նրան ուստարի պատճեն, կցելով տրված անդորր-
րագրերի պատճեները:

§ 94. Ապահովագրական տեսչության ավագ հաշ-
վապահի վրա յել դրվում հարկային գործակալների և
Պետապի տեսուչների կողմից հավաքված գումարների
ժամանակին հանձնելու հսկողությունը:

§ 95. Ապահովագրական վճարումների յուրաքան-
չյուր ժամկետի լրանալուց վոչ ուշ, քան յերկու որում
կազմվում ե ապահովագրական վճարների ապառքատե-
րերի ցուցակները՝

ա) Գյուղական վայրերում՝ ապահովագրվողների
տնտեսություններինը՝ շրջֆինբաժնների հարկային
գործակալների կողմից,

բ) Կոլխոզներինը և քաղաքների ապահովագրվող-

ներինը—ապահովագրական տեսչության հաշվապահի կողմից:

§ 96. Լրացուցիչ զեղջված և նոր հաշվարկիած գումարները բաշխվում են ըստ վճարման ժամկետների նույն տոկոսներով, ինչպիսի տոկոսներով բաշխված ե յեղել սկզբնական հաշվարկած վճարումները:

Յեթե առաջին ժամկետի վճարումներն արդեն վը ճարված են, այն դեպքում առաջին ժամկետին ընկա նոր զիջման յենթակա դումարը պակասեցվում է յերկ րորդ ժամկետի վճարման գումարից, իսկ նոր հաշվար կած գումարը հավասար մասերով բաժանվում է մուծ ման ժամկետի վրա: Այն դեպքում, յեթե հաշվարկու մը կատարվել ե վճարման վերջին ժամկետը լրանա լուց հետո, նոր հաշվարկած գումարը պետք է մուծ վի լրացուցիչ ապահովագրական վկայագիրը ապահո վագրվողին հանձնելուց վոչ ուշ, քան 15 որվա ընթաց քում:

§ 97. Այդ դեպքերում, յերբ լրացուցիչ արտօնություններ կամ զեղեր հատկացնելու հաշիվները ճշշ տելու և այլի հետևանքով գոյանում ե գերավճարում ներ, ավել մուծված գումարները վերադարձվում են ապահովագրվողներին վոչ ուշ, քան գերավճարումնե րը՝ հայտնաբերելուց 5 որվա ընթացքում:

Գերավճարումները վերադարձնելու մասին տեսչությունն ապահովագրվողներին ուղարկում ե ծանու ցում:

Գերավճարումները գյուղական վայրերում ապա հովագրվողներին վերադարձնելու դեպքերում, այդ ժանուարում ապատճեն ուղարկվում ե հարկային գործա կալին:

§ 98. Պարտադիր կոպարային ապահովագրության հաշվապահական հաշվառումը տարվում է Պետապի տեսչությունների կողմից, ԽՍՀՄ Պետապի Գլխավոր վարչության ցուցումների հիման վրա:

VI. ՊԵՏԱՊԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՑՈՒԹՅԱՆ ՍԿԻԶԲԸ ՅԵՎ. ԴԱԴԱՐՈՒՄԸ

§ 99. Պարտադիր կոպարային ապահովագրության յենթակա գույքի հաշվառումը կատարվում է տարե-

կան մեկ անգամ: Հաշվառումն անցկացնելուց հետո տնտեսություն մտած գույքը համարվում է ապահո վագրված տնտեսության մեջ նոր մտած որվանից:

§ 100. Կոլխոզների շենքերի ապահովագրությամբ Պետապի պատասխանատվությունը սկսվում է շինարարություններում— այն պահից, իսկ քաղաքացիների տնտեսություններում— այն պահից, յերբ շենքը դըր վում ե իր մշտական տեղը և ունենում է պատեր ու կտուր:

§ 101. Անասունների ապահովագրությամբ Պետապի պատասխանատվությունն սկսվում է նրանց ապահովագրական հասնելու պահից և ընդհատվում է տնտեսությունից դուրս գալու պահից:

Կոլխնտեսություններում տոհմային անասունների ապահովագրությամբ, Պետապի պատասխանատվությունը, նրանց ապահովագրական գնահատման լրիվ արժեքով, սկսվում է հետևյալ հասակներին հասնելուց. տոհմային ձիերը, ուղտերը, ավանակները— 2 տարեկան, տոհմային խոշոր յեղջյուրավոր անասունները, խոզերը, վոչխարները— 1 տարեկան: Կոլխոզում նոր մուտք յեղած տոհմային անասունները, վորոնք հասեի են նշված տարիքին, նույնպես համարվում են լրիվ արժեքով ապահովագրված:

§ 102. Պետապի պատասխանատվությունը գյուղատնտեսական կուլտուրաների ապահովագրությամբ սկսվում է՝

ա) Ցանովի կուլտուրաների նկատմամբ— ծիլերը յերեվալուց: Ուշ աշնանը ցանված գարնանացան կուլտուրաների նկատմամբ, Պետապի պատասխանատվությունն սկսվում է գարնանը ծիլերը՝ յերեվալու պահից:

բ) Տնկովի կուլտուրաների (պամիդոր, կաղամբ և այլն) և կարտոֆիլի նկատմամբ— տնկելու պահից:

գ) Պտղատու այգիների և հատապտուղների՝ նըկատմամբ— կոկոնները յերանդավորվելու (ոկրաշիվանիյե) պահից, իսկ խաղողի այգիների նկատմամբ— հուրանը (ավելիկը) դուրս գալու պահից:

դ) Ընդլայնած պատասխանատվությամբ ապահովագրվող կուլտուրաների (պարտադիր կոպարային ա-

պահովագրության որենքի հոդ. 5), ինչպես նաև բոլոր բազմամյա կուլտուրաների նկատմամբ, բացի պըտղատու և հատապտուղի տնկարաններից, Պետապի պատասխանատվությունն սկսվում է՝ ցանովի կուլտուրաների նկատմամբ— գարնանը ծիլերը յերեալու պարաների նկատմամբ— գարնանը ծիլերը յերեալու պարաների (որինակ՝ հից, տնկովի կուլտուրաների և թփուտների (որինակ՝ կազմակերպության վարդ, Լեվանդա) ու գայլուկի նկատմամբ՝ տնկելու պահից:

Պետապի պատասխանատվությունը շարունակվում է անընդհատ մինչև ոգտագործման վերջի տարվա բերքահավաքը:

(Ե) Յենթացանքսային, նույն թվում և ընդլայլից) Յենթացանքսային, նույն թվում և ընդլայլի նաձ պատասխանատվությամբ ապահովագրվող կուլտուրաների նկատմամբ— յենթացանվող կուլտուրայի ձմեռելու պահից:

§ 103. Բույսերի վողողում, արմատների մերկացում, ցանքերի ծածկում առաջնորդ տարափից և փոթորիկներից վնասներ առաջանալիս, նույնը և հեղեղումներից վնասներ առաջանալու դեպքում, բոլոր ցանովի կուլտուրաների նկատմամբ Պետապը պատասխանատվություն է կրում— ցանելու պահից:

§ 104. Գյուղատնտեսական կուլտուրաների ապահումը բերքի քանակական կորուստի համար:

Կարկտահարությունից ծխախոտի, մախորկայի, պտղատու այգիների, հատապտղանոցների և խաղողի այգիների բերքի ապահովագրությամբ Պետապը, բարայդիների, հատուցում և կարկտահարության հետեանցի այդ, հատուցում և կարկտահարության հետեանցի արտադրանքի վորակն ընկնելու վնասները (որինակ՝ խնձորի, խաղողի, ծխախոտի և այլն):

§ 105. Գյուղատնտեսական կուլտուրաների ապահումը բերքությունը դադարեցվում է բերքը հավաքելու պահից:

(Եթե բերքը տուժել է տվյալ վայրի համար սովորական ժամանակին տեղի ունեցող աշնանային ցըրտահարություն, Պետապն այդ վնասի համար պատասխանատվություն չի կրում:

VII. Ինչպիսի գոհաք ՅԵՆԹԱԿԱ. ԶԵ ՊԱՐՏԱԴԻՐ ԿՈՂԱՐՍՅԻՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ

§ 106. Կողազներում և քաղաքացիների տնտեսություններում պարտադիր կոպարային ապահովագրության յենթակա չեն՝

(ա) Պարտադիր կոպարային. ապահովագրության որենքի հոդ. 1-ի «Գ» և հոդված 2-ի «Բ» կետերով նախատեսնված ապահովագրական հասակի չհասած անսպառները:

(բ) Բնական մարդագետիների խոտերը:

(գ) Յենթացանքսային բույսերը (յերեքնուկ, առվույտ և այլն) ցանքսի առաջին տարում մինչ ձմեռելու պահը:

(դ) Բույսեր, վորոնք ցանվում են կանաչ պարագացման և արածացման նպատակով ոգտագործելու համար:

(ե) Դեկորատիվ (ծաղիկներ, խոտեր, թփուտներ, ծառեր) և անտառային տնկիներ:

(զ) Պտղատու և հատապտուղ տնկիներ (բուն ցողուն, վազեր, թփուտներ, ճյուղեր): Պտղատու և հատապտուղների տնկիների ապահովագրությամբ Պետապատուղների կրում է պատասխանատվություն միայն բերքի վնասվելու և կորուստի համար:

Պտղատու և հատապտուղ տնկիների ապահովագրությամբ Պետապը կրում է պատասխանատվություն բույսերի— իրենց կորստի դեպքում:

(ե) Անտառային և դեկորատիվ տնկարանների տընկիները:

(ը) Խարիսուլ, իր նպատակին ոգտագործելու համար անպետք, առանց հսկողության թողած ձկնորսական նավերը:

Բացի այդ քաղաքացիների տնտեսություններում պարտադիր կոպարային ապահովագրության յենթակա չեն՝

(ա) Խարիսուլ, քանդված, այդ խոկ պատճառով վորեվե տնտեսական նպատակների համար անոգտագործելի չենքերը:

(բ) Բնակելի շենքերը, վորոնք պատեր չունեն հողի մակերեսին գետնափոր տներ— (զեմլյանիաներ):

գ) Գյուղատնտեսական ցանքսերը, այդիների, հատապտղանոցների և խաղողի այգիների բերքը (բացիմենտատնտես տնտեսությունների դաշտային ցանքսից):

7) Յեղջերումելը:

§ 107. Ապահովագրության յենթակա չեն հատուկ կոլխոզներում կենտրոնացված սապով (մալեյնովիյե) հիվանդ ձիերը, ինչպես նաև վարակիչ սակավարյունությամբ (ինֆեկցիոն անեմիայով) հիվանդ ձիերը:

§ 108. Ապահովագրության յենթակա չեն, ամբարտակները, մելիորատիվ կառուցումները, թումբերը, մայթերը, ջրհողները, սալահատակները և կավեցան-կապատերը:

ՎԻ. ՎՈՐ ԴԵՊՔԵՐՈՒՄ ՊԵՏԱՊԸ ԶԻ ՀԱՏՈՒՑՈՒՄ ՎՆԱՍՆԵՐԸ

§ 109. Պետապի մարմինները չեն հատուցում վը-
նասները բոլոր այն դեպքերում յերբ ապահովագըր-
ված գույքի կորուստը կամ վնասվածքը առաջացել է
կոլխոզի վարչության հանցանքով, իսկ քաղաքացինե-
րի տնտեսություններում— ապահովագրվողի կամ նրա
ընտանիքի չափահաս անդամի հանցանքով:

Պետապի մարմինները իրավունք ունեն մերժելու ապահովագրական հատուցման վճարումը, յեթե ապահովագրվողը հնարիխություն ունենալով՝ հանդերձ, սահմանված ժամկետին չի հայտնել ապահովագրական դույքի կորուստի վեհականությունը:

§ 110. Պետապը չի հատուցում գյուղատնտեսական կուլտուրաների վնասվելու կամ տուժելու հետեւ վանքով առաջացած վնասների համար, յեթե տնտեսությունը մինչ ապահովագրական տեսչի կողմէից վը նաև մասին ակտ կազմելը, կվարի տուժած տարածությունները, կկատարի բերքահավաքը կամ թույլ կտա անասունների արածացում։

Յեթե ապահովագրական տեսուչն ակտը սահմանված ժամկետին չի կազմում (§ 119), այն դեպքում տնտեսությունը կարող է կատարել վերացանքս կամ վնասված կուլտուրայի բերքահավաքը, և այդդեպքում չի դրկվում ապահովագրական հատուցումից:

Պետապը նույնպես չի հատուցում վնասները, յեթէ տարերային աղետը տեղի յե ունեցել տարվա այն ժամանակին, յերբ տվյալ վայրի և տվյալ տարվա պայմաններում ապահովագրված կուլտուրայի բերքը պետք է արդեն հավաքված լիներ:

§ 111. Պետապը չի հատուցում վնասները, յեթև
տուժած գյուղատնտեսական կուլտուրան չի վերացան
վել, չնայած վերացանի անհրաժեշտությանը և ըստ
տարրակա ժամանակի՝ հնարավորությանը:

§ 112. Զրովի շրջաններում, ջուրը պլանով չնախա-
տեսնված ցանքսերի տարածությունները զրելու համար
ոգտագործելու հետևանքով, նույնպես և ջրի վոչ ճիշտ
ոգտագործման ուրիշ դեպքերից առաջացած գյուղատըն-
տեսական կուլտուրաների վնասները (յերաշտ) Պետա-
պր չի հատուցում:

§ 113. Յեթև տնտեսությունը միջոցներ օժոք չե-
առնում վնասված գույքը կարգի բերելու, Պետապը
պատասխանատվություն չի կրում վնասի չափը մեծա-
նայու համար:

Որինակ՝ Վնասի չափը մեծանալու համար Պետապը
պատախանատվություն չի կրում, յեթե տնտե-
սությունը վոչ մի միջոց ձեռք չի առնում վնաս
ված տարածության վրա բույսերի հետագա մը-
շակման ու խնամքի համար (բուկլից, քաղհան և
այլն):

§ 114. Ψειτωψή ορθωνύμερος ρέειν η αποφευκτή φύσης
γαδί λαμψάντην εργαζόμενην την αποφευκτή φύσην, η οποία
ορθή κατανόηση την αποφευκτή φύσην προστίθεται στην αποφευκτή φύση:

§ 116. Պետապը չի հատուցում քաղաքացիների
անքնակ շենքերի վնասները, յեթե առ ապահովագըր-
վողների ցուցակները կազմելու որը շենքի տիրոջ հաս
ցեն հայտնի չի յեղել և ապահովագրական վկայագիր
հանձնված չի յեղել, նույնպես և այն դեպքերում,
յերբ անքնակ շենքերի տերը մինչ հրդեհը չի հայտնել

ապահովագրական տեսչության, իր կողմից շենքի հսկողությունը (պահպանությունը) տվյալ բնականայրի ապրողներից մեկին հանձնարարելու մասին:

§ 117. Պետապի որդանները իրավունք ունեն վրասի հատուցումը մերժելու, յեթե ապահովագրվողը, հնարավորություն ունենալով հանդերձ, սահմանված ժամկետին (որենքի 33 հոդ.) չի հայտնել ապահովագրված գույքը փչանալու կամ վնասվելու մասին:

§ 118. Ապահովագրական տեսուչներն ապահովագրական հասարակական ակտիվի հետ միասնալ պարտավոր են ստուգել ապահովագրված գույքի դրությունը և ձգտել նրա պահպանության բարելավմանը:

Յեթե տնտեսությունը կարճ ժամկետում չի վերացնում ստուգման ժամանակ նկատված թերությունները, ապահովագրական տեսուչները պետք է այդ մասին հայտնեն գյուղխորհուրդների կամ աշխատավորների դեպուտատների շրջանային (քաղաքային) խորհուրդների գործադիր կոմիտեների համապատասխան միջոցներ ձեռք առնելու համար:

IX. ԱՊԱՀՈՎԱԳՐՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՓՉԱՆԱԼՈՒ ԿՍՄ ՎՆԱՍՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԱԿՏԵՐԻ ԿԱԶՄԵԼՆ ՈՒ ՀԱՍՏԱՏԵԼԸ

§ 119. Վնասների մասին ակտերը կազմվում են տարերային աղետի մասին ապահովագրվողից հայտարարությունն ստանալու որվանից հետեւյալ ժամկետներում՝

ա) Կրակեց և այլ տարերային աղետներից ապահովագրության, նույնպես և ձկնորսական նավերի ապահովագրությամբ— վոչ ուշ, քան 5 որվա ընթացքում:

բ) Անասունների ապահովագրությամբ— վոչ ուշ, քան 24 ժամվա (մեկ սուտկա) ընթացքում:

գ) Գյուղատնտեսական կուլտուրաների ապահովագրությամբ— վոչ ուշ, քան 5 որյա ժամկետում, յեթե վնասված կուլտուրան վերացանելու կամ շտապ կերպով հավաքելու անհրաժեշտության մասին հայտարարություն է յեղել, իսկ մնացած դեպքերում—

պահովագրական որդանների նշանակած ժամկենտերին, բայց անպայման մինչ բերքը հավաքելը:

Վնասների վերաբերյալ ակտերը կազմելու համար նշված ժամկետները կրկնապատճենվում են կազմական, Կիրգիզական, Ուզբեկական, Թուրքմենական, Ֆանիկան, Կարելո-ֆիննական ԽՍՀ-ում, Մուրմանսկի, Արխանգելսկի, Ումսկի, Նովոսիբիրսկի, Իրկուտսկի և Չիտինսկի մարզերում, Կրասնոյարսկի, Պրիմորսկի, Խաբարովսկի և Ալմայսկի յերկրամասերում, Կոմի ԱԽ ՍՀ Բուրյատ-Մոնղոլական և Յակուտական ԱԽՍՀ-ում:

§ 120. ԽՍՀՄ Պետապի կողմից սահմանված լիմիտների սահմաններում, մնասների վերաբերյալ ակտերը քննվում են ապահովագրական ավագ տեսուչների կողմից և հաստատվում են շրջանային (քաղաքային) Փինանսական բաժինների վարչների կողմից: Վնասի հաստատման կամ ապահովագրական հատուցման մերժման մասին շրջ. (քաղ.) Փինանսի վարչի կողմից ակտի վրա մակարություն ե արվում: Ապահովագրական հատուցումը մերժելու դեպքերում, ցույց ե տրվում մերժման պատճառների հիմնավորումը:

Ակտերի հաստատումը կատարվում է Պետապի տեսչություն նրանց մուտք լինելու որվանից վոչ ուշ, քան 5 որյա ժամկետում:

Յեթե ապահովագրական ավագ տեսուչը համաձայն չի շրջանային (քաղ.) Փինանսական բաժնի վարչի վորոշման հետ, ապա նա պարտավոր է այդ մասին հայտնելու Պետապի մարզային (յերկրային) վարչության, իսկ մարզային (յերկ.) բաժանում չունեցող հանրապետություններում— Պետապի հանրապետական վարչության: Նման դեպքերում վնասների վճարումը պետք է դադարեցվի, մինչև հարցը Պետապի վարչության կողմից լուծվելը:

Գերլիմիտային վնասների մասին ակտերը հաստատվում են վերաբաս որգանի կողմից վոչ ուշ, հաստատման համար ակտը Պետապի համապատասխան վարչություն մուտք լինելու որվանից 10 որյա ժամկետում:

§ 121. Վնասների վճարումը պետք է կատարվի

վոչ ուշ, քան 3 որում ակտը շրջ. (քաղ.) Փինբաժնի վարչի կողմից հաստատելու որվանից:

Վնասի հատուցումը մերժելու դեպքում, ապահովագրական ավագ տեսուչը պարտավոր է 3 որյա ժամկետում ապահովագրվողին դրավոր ծանուցելու այդ մասին և մանրամասնորեն ցույց տալու մերժման պատճառները:

X. Բ Ո Ղ Ո Ք Ն Ե Ր

§ 122. Պարտադիր կոպարային ապահովագրության որյեկտները սխալ հաշվի առնելու և վճարումները սխալ հաշվարկելու համար բողոքները տրվում են շրջանային (քաղաքային) Փինանսական բաժնի վարիչին:

Շրջ. (քաղ.) Փինբաժնի վարիչը պարտավոր է քննելու ստացված յուրաքանչյուր բողոքը, նրա վերաբերմամբ կայացնելու յուր վորոշումը վոչ ուշ, քան 10 որում բողոքը ստացվելու որվանից, իսկ կարմիր բանակայինների բողոքների նկատմամբ— վոչ ուշ, քան 5 որում և իր վորոշման մասին 24 ժամվա ժամկետում դրավոր կերպով հայտնելու բողոքատույին:

§ 123. Շրջանային (քաղաքային) Փինանսական բաժինների վարիչների սխալ գործողությունների վերաբերյալ բողոքները տրվում են Պետապի մարզային (յերկրային) կամ Հանրապետական վարչություններին ըստ պատկանելույն:

§ 124. Ապահովագրական վճարումները սխալ հաշվարկելու մասին բողոքները տրվում են դրավոր կերպով, վոչ ուշ, քան ապահովագրական վկայագիրն ստանալու որվանից մեկ ամսվա ժամկետում, իսկ ապահովագրական հատուցման չափը սխալ հաշվարկելու մասին կամ ապահովագրական հատուցումը մերժելու մասին— վոչ ուշ, քան մերժման վերաբերյալ ծանուցում ստանալու որվանից կամ ապահովագրական հատուցումն ստանալու որվանից մեկ ամսվա ժամկետում:

§ 125. Պետապի մարզային, յերկրային և հանրապետական վարչությունները պարտավոր են քննելու ի-

րենց մոտ մուտք յեղած յուրաքանչյուր բողոքը և կայացնելու նրանց վերաբերմամբ վորոշում վոչ ուշ, քան մեկ ամսվա ժամկետում բողոքը ստացվելու որվանից, իսկ կարմիր բանակայինների բողոքների վերաբերմամբ վոչ ուշ, քան 15 որում և իրենց վորոշման մասին գըրավոր կերպով հայտնելու բողոքատույին Պետապի համապատասխան շրջանային (քաղաքային) ապահովագրական տեսչության:

§ 126. Միութենական հանրապետությունների Պետապի վարչությունների վորոշման դեմ բողոքները տրվում են ԽՍՀ Միության Պետապի Գլխավոր վարչությանը:

Սույն հրահանգի հրապարակմամբ վերացվում են ԽՍՀՄ ՖԺԿ-ի 1938 թ. պարտադիր կոպարային ապահովագրության որյեկտների հաշվառում և վճարումների հաշվարկում կատարելու կարգի մասին ցուցմուտքը (21-ի մայիսի 1938 թ. № 276/139) և ԽՍՀՄ ՖԺԿ-ի «Պարտադիր կոպարային ապահովագրության որյեկտների հաշվառում և վճարումների հաշվարկում կատարելու» մասին 26-ին հունիսի 1939 թ. № 446/94 հրամանը:

ԽՍՀՄ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ
ԿՈՄԻՍԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ՄԱԼԵՏԻՆ

ԽՍՀՄ ՊԵՏԱՊԻ ԳԼԽԱՎՈՐ
ՎԱԶՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ ՏԵՂԱԿԱԼ՝ ԼՈՒԿԱՆԻՆ



Բարգմանիչ՝ կ. Շահագիջյան
Պատ. Խմբաղեք՝ Մ. Գառպարյան
Տէխ-խմբաղեք՝ Ա. Ոհանշանյան
Սրբադրիչ՝ Գ. Զրադացյանյան

Գլուխացի լիազոր՝ Բ-1161
Տիրած 1000, Պատվեր Նե 408
Պետհրատի տուաբան

ՀՀ Ազգային գրադարան



NL0211374

44.281

31674